Ոչ պաշտոնական հրապարակում
«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ
www.taxpayers.am, info@taxpayers.am

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

10 հուլիս 2012 թ. N 20

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ N 20

ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐՎՈՂ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվականի, ՀՕ-155, այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի համապատասխան հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Օրենքի 7-րդ հոդվածին համապատասխան համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Օրենքի իմաստով եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը:

Օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Միաժամանակ, ըստ օրենքի 16-րդ հոդվածի անհատույց տրամադրած ակտիվները չեն նվազեցվում համախառն եկամտից:

Համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումները իրականացվում են օրենքի 32-րդ հոդվածին համապատասխան:

Օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները:

ՀՀ կառավարության 24.12.2003 թ. N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 3-րդ կետին համապատասխան սուբսիդիան՝ պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և *ծառայությունների մատուցման արդյունքում* այդ կազմակերպության կրած *վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է*: Սուբսիդիան ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռքբերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը և կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ***.

Հաշվի առնելով, որ սուբսիդիան դա՝ պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների

մատուցման արդյունքում այդ կազմակերպության ***կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է, այլ ոչ թե այդ աշխատանքների (ծառայությունների) մի մասի անհատույց տրամադրման դիմաց չստացած արժեքի փոխհատուցումն է,*** ապա դրանց մասով անմիջականորեն կապված և վարչական (իրացման) ծախսերի գծով նվազեցումները իրականացվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածին, ինչպես նաև «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 5.12-րդ կետին համապատասխան՝ առանց որևէ համամասնության: